

## Կ Ա Ր Ծ Ի Ք

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԳԻՄԱՍՈՄԻ

**Նահապետյան Սեդա Սամվելի «Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

#### **1. Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Սեփականության իրավունքի ինստիտուտը մարդկային քաղաքակրթության զարգացման և առաջընթացի ապահովման հիմնադիր կատեգորիաներից է: Պատմության ընթացքում սեփականության իրավունքը, ձեռք բերելով տվյալ ժամանակահատվածին և տարածաշրջանին բնորոշ առանձնահատկություններ, ունեցավ վճռորոշ և էական ազդեցություն, հատկապես՝ քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ սեփականության իրավունքի տեսա-գործնական հարցերով զբաղվում են ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդիկ՝ փիլիսոփաներ, հոգեբաններ, իրավաբաններ, տնտեսագետներ և այլք: Նման երևույթը նշանակում է սեփականության իրավունքի կարևորյալ մասին, նախևառաջ, և երկրորդ, այդ հասկացության բազմաշերտության ու բազմաբովանդակության մասին: Ակնհայտ է նաև այն, որ բոլոր այն հասարակություններում և տնտեսակարգերում, որտեղ սեփականության իրավունքների կառավարումը և կարգավորումը գտնվում է բարձր մակարդակի վրա, ապահովվում է նաև բնակչության բարեկեցության բարձր մակարդակ: Այդ մասին են վկայում նաև սեփականության իրավունքի միջազգային ինդեքսի (ՄԻՄԻ) տվյալները:

Հայաստանի Հանրապետությունում, անցում ապահովելով համայնավարությունից ազատ շուկայական հարաբերությունների, սկսած 1990-ական թվականների սկզբից, իրականացվեցին մասնավոր սեփականության իրավունքի կայացման երեք զանգվածային և խոշոր ծրագրեր՝ գյուղատնտեսական նշանակության հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, բնակարանային ֆոնդի ու արտադրության միջոցների (պետական գույքի): Այս ծրագրերի իրագործման նպատակը ՀՀ-ում պետական սեփականության մենաշնորհի վերացումն էր տնտեսության և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ինչպես նաև բազմակացութաձև տնտեսության ձևավորումը: Միայն այս կերպ է հնարավոր ապահովել շուկայական տնտեսությունում որոշումների կայացումը, որը հիմնված է առանձին տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց նյութական պատասխանատվության վրա: Այլ

կերպ ասած, ակնհայտ դարձավ պետական սեփականության ապակենտրոնացման կարևորությունը և նշանակությունը: Եվ թեև անցած շուրջ 30 տարիների ընթացքում ՀՀ-ում սեփականության իրավունքի ոլորտում իրականացվել են բազմաթիվ բարեփոխումներ, սակայն ինչպես ցույց է տալիս առանձին ոլորտների գործունեության ցուցանիշների վերլուծությունը, առկա են բազմաթիվ թերություններ և բացթողումներ, որոնք կարիք ունեն տեսա-գործնական իմաստավորման և որոնց շտկման համար անհրաժեշտ է առաջարկությունների մշակում:

Բացի այդ, յուրաքանչյուր ժամանակաշրջան, իր հետ բերելով բազմաթիվ դժվարություններ և <<ֆորս-մաժորային>> իրավիճակներ (այդպիսին կարելի է դիտարկել COVID-19 համավարակը, Արցախյան պատերազմը և մյուսները), պահանջում է կիրառել սեփականության իրավունքի ոլորտում քաղաքականության իրականացման առանձնահատուկ սկզբունքներ: Այս ամենը արդիական և պահանջված են դարձնում սեփականության իրավունքի ուսումնասիրության ու կառավարման բարելավման հիմնահարցերը, հատկապես սոցիալ-տնտեսական զարգացման բարդ և դժվարին պայմաններում:

## **2. Հետազոտության նպատակը և խնդիրները**

Ատենախոսության նպատակն է՝ ՀՀ-ում սեփականության կառավարման բարելավմանն ուղղված տնտեսագիտական մոտեցումների և միջոցառումների մշակումը, որին հասնելու համար ատենախոսության մեջ դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

➤ ուսումնասիրել սեփականության ձևավորման տեսամեթոդական հիմքերը, դրանց զարգացումը, սեփականության իրավունքների ժամանակակից մեկնաբանություններն ու իրացման հիմնախնդիրները,

➤ հետազոտել սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանադրականության բնորոշումը և համեմատական բնութագրերը, սեփականության կառավարման գործընթացը,

➤ վերլուծել Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքների բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը, ներկայացնել այդ գործընթացի առանձնահատկությունները,

➤ հետազոտել պետական սեփականության ներդրման հիմնական ոլորտները, այդ կապակցությամբ ուսումնասիրել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, ինչպես նաև պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում սեփականության կառավարման հիմնախնդիրները,

➤ հետագոտել ՀՀ-ում սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման հիմնախնդիրները՝ սահմանադրականության դիտակետից և առաջարկել քարտեզավման ուղիները,

➤ առաջարկել սկզբնական օղակներում (կազմակերպություններում) սեփականության կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումներ,

➤ առաջարկել պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման նոր գործիքներ:

### **3. Հետագոտությունում ստացված արդյունքները և առևտրային գիտական նորույթը**

Առևտրային գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Տնտեսության պետական կառավարման տեսա-գործնական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են ազգային տնտեսությունում պետական սեփականության և պետական ձեռնարկատիրության փոխառնչություններն ու սահմանները, դրանց կառավարման արդյունավետության բարձրացման նախադրյալները, հիմնավորվել են տնտեսական քաղաքականության մեջ սեփականության կառավարման բովանդակությունը և գործիքակազմը:

2. Բացահայտվել են ինստիտուցիոնալ բնույթի այն ցուցիչները, որոնք վճռորոշ դերակատարում են ունեցել սահմանադրականության դեֆիցիտի կրճատման, սահմանադրականության չափանիշից ելնելով երկրների կլաստերացման համար: Այդ ցուցիչների թվում են գույքային իրավունքների իրացումը, կոռուպցիայի մակարդակը և այլն:

3. Պետության կողմից իր սեփականության իրավունքների իրացման և կազմակերպությունների գործունեության ֆինանսա-տնտեսական արդյունքների վերլուծության արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում պետական սեփականության կառավարման վրա ազդող բացասական գործոններն ու ներկայացվել են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ և միջոցառումներ:

4. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը խթանելու և պետական ակտիվների շահութաբերության մակարդակը բարձրացնելու համար առաջարկվել են այդպիսի կազմակերպությունների գործունեության գնահատման մոտեցումներ:

5. Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մոդելի փոփոխությունը պետք է ապահովի հնարավոր ինքնուրույնություն այդ կազմակերպությունների համար, ինչպես նաև թույլ տա ներդնել առևտրային կազմակերպություններին բնորոշ գործարար և կառավարման կառուցակարգերը:

**4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը:** Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները, ինչպես նաև պետական սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում բյուջետային մուտքերի, կազմակերպությունների սեփական եկամուտների ավելացման և կառավարման որակի բարելավման վերաբերյալ առաջարկված մոտեցումները, միջոցառումները կարող են օգտագործվել ՀՀ գործադիր մարմինների, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մարմինների կողմից՝ իրենց սեփականությունից և պետական բաժնետոմսերից (բաժնեմասերից) ստացվող հատույցի ավելացման նպատակով ու կառավարման որակի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքների կատարման ժամանակ: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել պետական գույքի կառավարման լիազորություններ ունեցող մարմինների, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական գույքի կառավարման հիմնախնդիրներով զբաղվողների ու այլ հետազոտողների համար:

**5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 162 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածի):

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, նշվել են հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:

Ատենախոսության առաջին՝ «Սեփականության ձևավորման տեսանկյունից արևմտյան կառավարման հիմնադրույթները և սահմանադրականությունը անցումային տնտեսությամբ երկրներում» գլխում ուսումնասիրվել են սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, վերհանվել են սեփականության իրավունքի սահմանման և իրացման հիմնախնդիրները: Հեղինակը քննարկում է սեփականության իրավունքը սահմանադրականության համատեքստում, ինչպես նաև ներկայացնում է սեփականության կառավարման գործընթացը:

Ատենախոսության երկրորդ՝ «Սեփականության կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում հեղինակը քննարկել է սեփականության իրավունքների բազմազանեցման և

ապակենտրոնացման գործընթացը ՀՀ-ում, որի արդյունքում ձևավորվեց սեփականության ներկայիս կառուցվածքը: Աշխատանքի այս մասում ներկայացվել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման արդյունքները՝ վերջին տարիների համար, ինչպես նաև վերհանվել են պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում սեփականության կառավարման հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Սեփականության կառավարման և տնտեսաիրավական կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման և քարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Այնուհետև հեղինակը ներկայացրել է կազմակերպություններում սեփականության կառավարման արդյունավետության գնահատումը ու պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման գործիքների ներդրման վերաբերյալ մոտեցումները:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

## **6. Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ**

Ներկայացված ատենախոսությունը գերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները՝

1. Ատենախոսության երկրորդ գլխում (ենթագլուխ 2.2-ում՝ Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման արդյունքները) հեղինակը նշում է. «Կազմակերպությունների 2020թ.-ի գործունեության արդյունքում ձևավորվել է 40645 մլն դրամ վնաս, մինչդեռ 2019 թ.-ի տարեկան տվյալներով վնասը կազմում էր 11352 մլն դրամ: Այսինքն վնասի ծավալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ ավելացել է մոտ 29293 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի ոլորտի կազմակերպությունների կողմից ձևավորած 36334,4 մլն դրամ ձևավորված վնասով, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կազմակերպությունների կողմից ձևավորած 901,8 մլն դրամ վնասով, Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ձևավորած 1220 մլն դրամ վնասով:»:

Կարծում ենք, որ հեղինակը պետք է ուշադրություն դարձներ այն հանգամանքին, որ խոսքը առևտրային կազմակերպությունների մասին է (դրանք բոլորը փակ բաժնետիրական ընկերություններ են, որոնց գործունեության հիմնական նպատակը շահույթ ստանալն է): Իսկ ինչպե՞ս կարող է որ դրանք տարիներ շարունակ

միլիարդավոր վնասներ են ձևավորել և շարունակել են իրենց տնտեսական գործունեությունը: Ի՞նչ է ՀՀ-ում ընդունված օրենքների դրույթները չեն տարածվում փակ բաժնետիրական ընկերությունների վրա, որոնց միակ բաժնետերը պետությունն է, և ի՞նչ է անում դրանց սեփականատերը ընկերությունների վնասները նվազեցնելու համար:

2. Հատկապես պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքների վերլուծությունը ենթոյրում է, որ իմաստ ուներ ուսումնասիրել նաև ըստ առանձին ոլորտների (օրինակ՝ ջրային տնտեսություն, էներգետիկա, ավիացիա, պրանսպորտ և այլն) գործունեության արդյունքները, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված ոլորտների կազմակերպությունները տարիներ շարունակ ձևավորել են հսկայական վնասներ կամ էլ ունեն շահութաբերության խիստ ցածր ցուցանիշներ:

3. Թեև ՀՀ-ում գործում է «Մասնկության մասին» օրենքը (ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին), որը ենթադրում է ֆինանսական առողջացման ծրագրերի միջոցով առևտրային կազմակերպությունների վճարունակության ապահովում, ինչպես նաև թույլ ֆինանսական կարգապահություն ունեցող կազմակերպությունների հետացումը շուկայից, սակայն այդ օրենքի դրույթները անհասկանալի պատճառներով ՀՀ-ում չի կիրառվում, ինչն էլ հանգեցնում է վնասաբեր կամ խիստ ցածր արդյունավետություն ունեցող առևտրային կազմակերպությունների գոյությանը: Կարծում ենք հեղինակը առաջիկայում (իր հետագա ուսումնասիրություններում) ուշադրության կարժանացնի նշված հանգամանքը՝ նկատի ունենալով, որ թե՛ պետական, թե՛ համայնքային կազմակերպությունների սնանկացման գործիքակազմը անհամեմատ ավելի լայն դիապազոն կարող է ունենալ:

## Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները:

Սեդա Սամվելի Նահապետյանի «Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» հետազոտությունն ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են ակնհայտ դրական ազդեցություն ունենալ ՀՀ-ում սեփականության իրավունքի կառավարման և

կարգավորման հարաբերությունների բարելավման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների համար:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր, ինչպես նաև սեփականության հարաբերությունների բնագավառում գործառույթներ իրականացնող մարմինների աշխատանքներում:

Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, ատենախոսությունը հագեցած է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող նյութերով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի իրապարակած 8 (ութ) գիտական աշխատանքում:

Սեդա Սամվելի Նահապետյանի «Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման  
ֆակուլտետի «Նորարարության  
տնտեսագիտություն» ամբիոնի վարիչ**

**Ա.Խ.ՄԱՐԿՈՍՅԱՆ**

**Պարոն Ա.Մարկոսյանի ստորագրության  
իսկությունը հաստատում եմ.**

**ԵՊՀ գիտական քարտուղար,  
բանասիրական գիա. թեկնածու**

**Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**29 ապրիլի 2022թ.**

